ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9

<<ԳՀԱՊՁԲ-2019/16-21-ԵՊԲՀ>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման արտահերթ նիստի

ք. Երևան **_27_ _հունիսի_ _2019թ._**
ժամը _16[00]_

Մասնակցությամբ՝

Հանձնաժողովի նախագահ՝ **Լ. Դանիելյան (ԳՊ/ԳԱՊ)**
Հանձնաժողովի անդամներ՝ **Մ. Գրիգորյան (ԳՊ/ԳԱ)**
Ա. Հակոբյան (ԳՊ/ԳԱ)
Կ. Մկրտչյան (ԳՊ/ԲԱ)
Է. Միրոյան (ԳՊ/ԲԱ)
Հանձնաժողովի քարտուղար՝ **Ս. Մկրտչյան (ԳՊ/ՄՀՄ)**

1. <<ԳՀԱՊՁԲ-2019/16-21-ԵՊԲՀ>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ

1.1 Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Մեդէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում, որպես շտկում ներկայացված փաստաթղթերը ուսումնասիրվել են մասնակի՝ ոչ լիարժեք, մասնավորապես, որպես շտկում ներկայացված՝ սարքն արտադրող կազմակերպության պաշտոնական գրությանը գնահատող հանձնաժողովը չի անդրադարձել, ուստի սույն թվականի հունիսի 24 գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 8 արձանագրության 1-ին կետի 1.3 ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝
«Մեդէքսպերտ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է իր կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում առկա անհամապատասխանությունները հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան:

1.2 Ուժը կորցրած ճանաչել սույն թվականի հունիսի 24-ի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 8 արձանագրության 1-ին կետի 1.4 ենթակետը, և 3-րդ կետը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

2. <<ԳՀԱՊՁԲ-2019/16-21-ԵՊԲՀ>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

2.1 **<<ԳՀԱՊՁԲ-2019/16-21-ԵՊԲՀ>>** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը, մասնակցի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, հանձնաժողովի անդամների կողմից իրականացված հայտերի գնահատման արդյունքները, հանձնաժողովը որոշեց.

- <<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամի կարիքների համար բժշկական սարքավորումների և գործիքների ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել՝

- **N** 8 չափաբաժնի մասով **«Մեդէքսպերտ» ՍՊԸ**-ին.

- <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝ թիվ 8 չափաբաժնի մասով հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և սահմանել անգործության ժամկետ:

• Անգործության ժամկետի ավարտին հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

3. Հանձնաժողովի նիստին ներկա անդամների և քարտուղարի անուն-ազգանունները և ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ՝ _____ **Լ.Դանիելյան**
(ստորագրությունը)

Հանձնաժողովի անդամներ՝ _____ **Ա.Հակոբյան**
(ստորագրությունը)

_____ **Կ.Մկրտչյան**
(ստորագրությունը)

_____ **Մ.Գրիգորյան**
(ստորագրությունը)

_____ **Է.Միրոյան**
(ստորագրությունը)

Հանձնաժողովի քարտուղար՝
_____ **Ս. Մկրտչյան**
(ստորագրությունը)